ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2011թ №28Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ, ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.21-րդ կետի «ա» ենթակետի և 1.22-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2011թ. մարտի 16-ի՝ հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովող միջոցառումների իրականացման վերաբերյալ N20/146 գրավոր զեկուցագրի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզում 2011թվականին հնարավոր տարերային աղետներից, գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել ՀՀ Սյունիքի մարզում 2011թվականին հնարավոր տարերային աղետներից, գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N2 հավելվածի:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործողությունների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. մարտի 18
ք. Կապան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2011թ. մարտի 18-ի N _____Ա
որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Սյունիքի մարզում 2011թ. հնարավոր գարնանային հեղեղումներից և սելավներից բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի

Ա. Դոլունց	-	Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Հարությունյան	-	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ՀՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ /համաձայնությամբ/
Ս. Ավետիսյան	-	Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Ա. Ուստաբաշյան	-	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Ա. Իշխանյան	-	Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ
Ա. Ծատրյան	-	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Մ. Կոստանդյան	-	Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզպետի 2011թ.
մարտի 18 -ի N---------Ա որոշման

ԾՐԱԳԻՐ

ՀՀ Սյունիքի մարզում 2011թ. տարերային աղետներից, գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների

ՀՀ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Ժամկետը
1.	Անհրաժեշտությունից ելնելով, հնարավոր հեղեղումներից բնակչության պաշտպանության համայնքային հանձնաժողովների ստեղծում, համապատասխան փրկարար ուժերի կազմակերպում, մարզային հանձնաժողովին առաջարկությունների ներկայացում, անհրաժեշտ այլ միջոցառումների իրականացում.	ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներ	մինչև 2011թվականի մարտի 30-ը
2.	Գետերի և սելավատարների հեղեղային ելքերի հեռացումն ապահովելու համար գետերի հուներում և ափամերձ տարածքներում մշտական աղբահանության և ափապաշտպան աշխատանքների իրականացում.	ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներ	մինչև 2011թվականի ապրիլի 15-ը
3.	Գետերն աղտոտող անձանց ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկում.	ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներ	2011թվականի ընթացքում
4.	Համայնքի տարածքի սողանքային գոտիներում դիտարկումների կազմակերպում.	ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներ	2011թվականի ընթացքում
5.	Անհրժեշտության դեպքում հեղեղավտանգ գոտում գտնվող բնակչության իրազեկում նկուղային հարկերից և սննդամթերքի պահպանման հորերից ունեցվածքի տեղափոխության մասին.	ՀՀ Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներ	մինչև 2011 թվականի ապրիլի 20-ը
6.	Գետերում, ջրամբարներում ջրի մակարդակի բարձրացում և եղանակի տեսության վերաբերյալ պարբերաբար հաղորդումների ներկայացում Սյունիքի մարզային փրկարարական վարչություն	ՀՀ Սյունիքի մարզային օդերևութաբանական ծառայություն	2011թվականի ընթացքում
7.	Անհրաժեշտ ուսումնասիրությունների կատարում և առաջարկությունների ներկայացում ՀՀ Սյունիքի մարզպետին.	Հնարավոր տարերային աղետներից, գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու , նվազեցնելու և վերացնելու նպատակով ստեղծված մարզային հանձնաժողով	մինչև 2011թվականի ապրիլի 10-ը

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան